# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**04 հոկտեմբերի 2018 թվականի N 165-Ա**

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի սեպտեմբերի 27-ի N 282-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի 2018 թվականի հոկտեմբերի 1-ի N 21606-18 զեկուցագիրը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ներքոհիշյալ աշխատողներին 2018 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 23-ը ներառյալ տասը օրով, գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք՝ *2018 թվականի իրավական և մասնագիտական հսկողություն* իրականացնելու համար.

1) *Գրիգոր Գույյան* - ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ *(հինգ օր)*,

2) *Հարություն Ալեքսանյան* - տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ *(տասը օր)*:

2. *Գրիգոր Գույյանի* գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ *Մանվել Պետրոսյանի* վրա:

3. *Հարություն Ալեքսանյանի* գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ *Արմեն Հակոբյանի* վրա:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

**2018 թվականի հոկտեմբերի 04**
**ք. Հրազդան**